



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11
էլ. հասցե: info_gavar@aarhus.am

N AA - 005

« 05 » Մայիսի 2013թ

ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակ
ՄԱԿ-ի զարգացման ծրագրի
Բնապահպանական ծրագրերի համակարգող՝
պարոն Արմեն Մարտիրոսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարտիրոսյան

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագիրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն Սևանա լճի հետ կապված ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի կողմից, կամ գրասենյակի հետ համատեղ բոլոր տարիների իրականացված ծրագրերի մասին.

Տարին	Ծրագրի անվանումը	Իրականացնող կողմը /երը/		Ծրագրի նպատակը	Ստացված կամ ակնկալվող արդյունքները	Բյուջեն		Կարգավիճակը			Ստացված փաստացի արդյունք
		/Ծրագրի ղեկավարը/	Համատեղ իրականացնող կողմը /երը/			ՄԱԿ	Այլ	Ավարտված	Ընթացքում	Ընդհատված /պատճառները/	

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն:

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող

Լ. Ասոյան